Գործ թիվ ԵԴ/4579/02/23

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

28 մարտի 2023թ. **ք. Երևան**

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան)

նախագահությամբ դատավոր՝ **Տ. Գրիգորյանի**

քարտուղարությամբ՝ Ա. Մարաբյանի
մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝ Հ. Եգոյանի
պատասխանողի ներկայացուցիչներ՝ Ն. Այվազյանի,
Ռ. Մեհրաբյանի

Քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<ՍՏՐՈՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) (գրանցման համար 52.110.1212819, ՀՎՀՀ 04240007, հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Շահումյան փ. շ. 7/33) ընդդեմ <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատասխանող) (հասցե՝ ք. Երևան, Տերյան 105)՝ <<ՍՏՐՈՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի ռեկտորի 14.09.2022թ. որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր <<ՍՏՐՈՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ.Ռուբենյանը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի՝ <<ՍՏՐՈՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի ռեկտորի 14.09.2022թ. որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Դատարանը 20.02.2023թ. որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու, գործը դատական նիստում քննելու մասին միջնորդությունը մերժելու, ապացույց պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

<<ՍՏՐՈՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին <<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի ռեկտորի 14.09.2022թ. որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ, բավարարել:

<<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամի ռեկտորի 14.09.2022թ. որոշումը ճանաչել անվավեր:

<<Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան>> հիմնադրամից հօգուտ <<ՍՏՐՈՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ, որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ